

ԾՈՎԱԿ



Ե. Տարի, Թիւ 3, Յուլիս 1, 1931

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻԿ ԶՆԳՇՈՅ ԾՈՎԱԿ ԸՆԹԵՐՑ. ԸՆԿ.-ԵԱՆ

Հրատարակելի Գրութիւններ Ղրկել 852 N. Hoyne Ave., Chicago, Ill.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻՆ ԱՌԹԻԻ

Զնգուշի Վերջ. Միութեան 7րդ Պատգ. Ժողովը պիտի դադարուի, ինչպէս սովոր է, Յուլիս 4 եւ 5 օրերուն, Նիւ Եորքի մէջ, կը տեղեկագրուի մեզ Կեդր. Վարչութեան գիւտնին կողմէ:

Կրկին մասնաճիւղերու կողմէ ընարուած պատգամաւորներ պիտի ժողովուին ներկայացնելու իրենց տարեկան գործունէութեան տեղեկագիրներն ու զանազան հարցերու շուրջ իրենց տեսակէտները, եւ լսելու վերին գործադիր մարմնոյն տարեկան տեղեկատուութիւնն ու, կրկին, իրենց գնահատանքի կամ պարտաւանքի խօսքը ըսելու:

Հոս ի յայտ կուգայ պատգամաւորներու ըստանձնած աշխատանքին կարեւորութիւնը: Զենք սխալիւր եթէ բանք թէ շատ ինչ կախում ունի աւոնց դատումէն:

Պատգամաւորներ անհրաժեշտ է որ գիտակցին սա կէտին թէ, իրենք միայն տարուան մը գործունէութեան վերջակէտը դնելու համար չէ որ կ'երթան Պատգ. Ժողովի, այլ առաւելապէս նոր գործունէութեան մը սկիզբը դնելու: Փակելու հին՝ կարգացուած էջը եւ բանալու տակաւին չեղծանումը:

Ուստի պատգամաւորներէն կը սպասուի դատելու ու դատաւարտելու առաջ ու աւելի, ծրագրելու եւ յառաջդիմական աղբիւրներ ու միջոցներ ըստեղծելու կարողութիւնը: Այս վերջինն է կարեւորագոյնը եւ այս վերջինէն կախում ունի Միութեան ապագան: Կը հաւատանք թէ մեր պատգամաւորները ամէնքն ալ կը գիտակցին իրենց այս կրկնակ եւ վճռողական դերին եւ ըստ այնմ կը գործածեն իրենց վստահուած հեղինակութիւնը:

Պատգամաւորները կանխապաշտ կարծիքներով նախապաշարելու նպատակ թող չվերագրուի մեզ, եթէ մեր տեսութիւնները յայտնենք հոս՝ մասնա-

ճիւղերու եւ Կեդրոնի տարուան մը գործունէութեան շուրջ:

Դժբախտաբար հարկ եղած ծանօթութիւնը չունինք մասնաճիւղերու գործունէութեան մասին. սակայն ինչ որ գիտենք ու լսած ենք հոսկէ հոսկէ, մեզի խորհիլ կուտան թէ մասնաճիւղեր, հաւառակ տիրող աննպաստ պայմաններու, աւելի լաւ գործունէութիւն ունեցած են: Ասիկա անշուշտ, եթէ հաստատուի, ուրախալի է եւ պատուարեր մասնաճիւղերու եւ անձնիւր պարտաճանաչ հայրենակցի:

Եթէ չենք կրնար որոշ կերպով արտայայտուիլ մասնաճիւղերու գործունէութեան մասին, կրնանք սակայն հաստատ համոզումով եւ անկեղծ դոհունակութեամբ ըսել ու յայտարարել թէ, Կեդր. Վարչութիւնը այս տարի աւելի ուժեղ եւ կանոնաւոր գործունէութիւն ունեցաւ: Կեդրոնը, ամէնէն առաջ, իր ժիր ու կարող ատենադպրին միջոցաւ, կանոնաւոր յարաբերութիւն մշակեց մասնաճիւղերու հետ, ատենին հաղորդեց անոնց իր որոշումները եւ ըրաւ թելադրութիւններ, տուաւ հրահանգներ՝ հաւաքական գործունէութեան եւ մասնաճիւղերու ներքեւ ամփոփման համար:

Կեդրոնը, նկատի առնելով աշխատանքին ապերախտ հանգամանքը եւ կարգ մը տեղերու մէջ երեւան եկած անախորժ երեւոյթները, իր ներկայացուցիչը փութացուց ուր որ հարկ անհրաժեշտ պատու: Եւ ասիկա, անկասկած, իր բարերար արդիւնքները ունեցաւ, եւ կարգ մը տեղեր կազմակերպութեան թուլցած ջիւղերը զօրացան եւ անհամաձայնութիւնները լռեցին՝ յօգուտ եւ ի սէր Միութեան բարձրագոյն շահերուն:

Այս տարուան Կեդր. Վարչութիւնը բախտաւոր եղաւ նաեւ անով որ տարիներէ ի վեր դատարաններու մէջ քաջաջուող ծանօթ դատը իր բնական լուծումին յանգեցաւ. Միութիւնը իր յաղթանակը տարաւ կարգ մը յամառ ու անուղղայ հայրենակիցներու դէմ, եւ մենք օրը օրին կը սպասենք որ դատարանը վերջնականապէս Միութեան յանձնէ այն խոշոր դումարը, որ վար գրուած է զրամատան

մը մէջ, եւ որու գործածութեան անմիջական պէտքը կայ Նոր Զնգուչի վերաշինութեան համար՝ մեր վերածնող հայրենիքին մէջ:

Լա՛ւ ջանադրութիւն, անտարադիտ, եթէ ոչ լա՛ւ գործ՝ կարգ մը խոտապահանջ եւ յաւէտ դըժգոհ քննադատներու համար:

Անշուշտ մեղմէ կ'ակնկալուի կարգ մը թելադրութիւններ ընել այս առթիւ եւ ըսել թէ ի՞նչ պէտք է ընել եւ ի՞նչ չընել յառաջիկային:

Լաւ: Ի՞նչ թելադրենք սակայն որ տակէ առաջ ըսուած չըլլայ: Իրա՛ւ որ կը դժուարանանք նոր ծրագիր մը ներկայացնելու մեր մտորոնումին մէջ, եւ ի՞նչ պէտք կայ նորի, երբ հինը, դեռ չիրականացած, ցցուած կը մնայ մեր առջեւ եւ մեղ կը հըրաւիրէ կորովի գործունէութեան եւ զոհաբերութեան:

Այո՛, ոչ մէկ նոր թելադրութիւն մեր կողմէ այս անգամ, այլ միայն սրտագին հրաւեր մը՝ հոգեւին փարելու առաջադրուած նպատակին փութկոտ իրականացման:

Զըլլայ որ յոգնածութեան եւ պարտութեան նշաններ ցոյց տանք, չըլլայ որ փոքր ու անմիջական գործերը պատուար կանգնին մեր առջեւ եւ մենք մոռնանք էականը, վերջնականը: Ներկան չմոռնանք, այո, աշխատինք այսօրուան ցաւերուն բարւոք լուծման կարելի միջոցներով, եւ սակայն երբեք յանձնառու չըլլանք ապագան ներկային զոհելու կարճատեսութեան ու յիմարտութեան:

Անհատներ ու կազմակերպութիւններ կը մեռնին երբ կը միտին անմիջականը գերադասել հեռուկայ նպատակէն: Տեսիլքն է ոեւէ կազմակերպութեան յառաջացումին ու հզօրացման կարեւորագոյն ազդակը, եւ տեսիլքն է ոեւէ կազմակերպութեան գոյութեան միակ արդարացումը: Զնգուչի վերաշինաց Միութեան տեսիլքն է Նոր Զնգուչի շինութիւնը Հայաստանի մէջ: Առանց այս տեսիլքին ան չկրնար ապրիլ: Այս տեսիլքը թող ըլլայ մեր բեւեռային աստղը. անոր ուղղեմք մեր աչքերը, քալենք դէպի այդ լուսաւոր չուկէտը, եւ վստահ ըլլանք թէ մեր այդ յառումին ու յառաջացումին մէջ աւելի դիւրաւ իրենց լուծումը պիտի գտնեն նաեւ առժամանակեայ եւ երկրորդական խնդիրները, որոնք կրնան երեւան գալ օրէ օր:

Սօսք մըն ալ, եթէ ներելի է, մեր ոչ-պատգամաւոր Նիւ Եորքցի հայրենակիցներուն:

Պատգամաւորներէ ոմանք կուզան հեռու տեղերէ՝ յանձն առնելով ամէն յոգնութիւն եւ նեղութիւն: Դժբախտաբար տեղւոյն վրայ գտնուող հայրենակիցներէ շատ շատեր անտարբեր դիրք մը կ'ունենան պատգ. Ժողովին հանդէպ եւ նոյն իսկ մէկ ժամու համար ժողովին ներս ոտք չեն դնել: Շատ հեղ տեղւոյն պատգամաւորները աւելի ուշ կը հասնին Ժողովավայրը քան հեռուէն ժամանողները: Հարկաւ ասիկա խիստ ցուրտ ազդեցութիւն կը գործէ եւ կ'ազդէ Ժողովի աշխատութեանց վրայ:

Մենք իրաւամբ կ'ակնկալենք որ մեր Նիւ Եորքցի հայրենակիցները աւելի եռանդ ցոյց տան եւ իրենց ներկայութեամբ աւելցնեն Ժողովին խանդն ու հետաքրքրութիւնը: Արդեօք ասիկա մե՞ծ պահանջ մըն է: Զենք կարծեր: Եւ արդէն պատգա-

մաւորական Ժողովներ պէտք է ծառայեն նաեւ իբրեւ միջոց դայրենակցական յարաբերութեան եւ շփումի: Զիրար աւելի մօտէն ճանչնալով եւ իրարու հետ սերտ յարաբերութիւն մշակելով կրնանք մեր մէջ ստեղծել գործակցութեան ոգի եւ իրարու հանդէպ հանդուրժող ըլլալու տրամադրութիւն որոնք խիստ կենսական են, եւ որոնց շատ պէտք ունիք մենք բոլորս:

Ի սրտէ յաջողութիւն կը մտղթենք Պատգ. Ժողովի աշխատութեանց:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

Զնգուչի վերաշինաց Միութեան Էրդ. Պատգամաւորական Ժողովը պիտի դումարուի Յուլիս 4—5, Շաբաթ եւ Կիրակի օրեր, Նիւ Եորք, Հայ մանկապարտէզի սրահին մէջ: Ժողովին պիտի մասնակցին Ամերիկայի մասնաճիւղերէն Լօրէնս, Շիքսօ, Բալիֆօրնիա, Ֆիլատէլֆիա, Նիւ Եորք եւ Եունիթն Սիթի, իսկ արտասահմանի մասնաճիւղերէն՝ Հալէպ, Պէյրութ եւ Մարսէյլ՝ իրենց ձայնը ներկայացնող պատգամաւորներով:

Միութեան այս գերագոյն Ժողովին կը հրաւիրուին պատգամաւորներէն զատ բոլոր Միութեան գործերով շահագրգռող հայրենակիցներ:

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՌԱՔՈՒՄ

Կեդր. վարչութեան կողմէն ի պատասխան կարօտ Զրեղուչիներու օգնութեան համար մասնաճիւղերէն Եկած գումարները անմիջական կերպով գործածուած են իրենց նպատակին՝ հետեւեալ առաքումներով. —

Հալէպի մասնաճիւղին	\$100.00
Պէյրութի մասնաճիւղին	65.00
Մարսէյլի մասնաճիւղին	30.00
Ընդհանուր գումար	\$195.00

Ի դիմաց Զնգուչի վերջ. Միութեան
Կեդրոնական վարչութեան
ԴԻԻԱՆ

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Փափաքելով լոյս ընծայել «Ծօվառ»ը Միութեան Պատգ. Ժողովին առթիւ, ստիպուեցանք այս քիւր ժամանակէն առաջ եւ միայն չորս էջով հրատարակել: Յաջորդ քիւերը պիտի հրատարակուին 8 էջով:

ՆՈՒԷՐՆԵՐ «ԾՕՎԱՌ»Ի

Տիկ. Աղանի Տաղտիկանի թէյասեղանէն պոյացած	\$14.00
Ատիշի ֆօլ Գրիգորեան, Սան Ֆրանչիսկօ	1.00
Կ. Յակոբեան, Ֆրէշնօ	2.00
Գումար	\$17.00
Մեր շնորհակալութիւնները նուիրատուներուն:	

ՆՈՐ ԶՆԳՈՒՇԸ

ՈՐՈՑ ՈՐ ԱՆԿ Է

Մի քանի շաբաթ առաջ Հ. Բ. Բ. Միութեան կողմէ ըստացանք կարգ մը կարեւոր տեղեկութիւններ Նուպարաշէնի շինութեան մասին, որ կ'արժէ «Ծօլառ»-ի միջոցաւ հաղորդել մեր հայրենակիցներուն:

Նուպարաշէնի շինութեան համար Բարեկործականի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ բոլոր բանակցութիւնները լրացած, համաձայնութիւնները գոյացած են, եւ քիչ ատենէն շինութեան պիտի սկսուի:

Այս տեղեկութեան հետ միասին զրկուած էր Նուպարաշէնի գոնաւոր քարտէսը, լաւ կերպով դժագրուած, թաղերը բաժնուած, դպրոցի եւ այլ կարեւոր շէնքերու տեղերը նշանակուած, ամէն բան մանրամասն նկարագրուած: Երանի թէ կարելի ըլլար զայն ցուցնել իւրաքանչիւր հայրենակցի:

Նուպարաշէնը պիտի շինուի, ասոր տարակոյս չկայ, հոս կ'արժէ որ քիչ մը տեղեկութիւն ունենանք այս մասին, որպէս զի մեր հայրենակիցներէն անոնք որ տակաւին տարակոյս ունին՝ թօթալին զայն եւ աւելի ուղեւորուած ուղիով աշխատին Նոր Զնգուշ թաղամասի շինութեան համար:

Նախ, Բարեկործականը մեզի խոստացած է մեր հինգ տան վրայ աւելցնել հինգ տուն եւս իր կողմէ:

Երկրորդ, Բարեկործականը խոստացած է (ոչ անսպասան) որ մեր դաղթականները Հայաստան փոխադրէ՝ անոնց ծախքերը ինք հոգալով, անոնց վիզէի խնդիրը ինք կարողացնելով:

Երրորդ, դպրոցներու, ջուրի եւ շատ մը ուրիշ կառուար դրժերու պատասխանատուութիւնը Բարեկործականը կը ստանձնէ:

Կը տեսնէք թէ մեր դործը շատ դիւրացած է եւ շատ մը անհարկի ծախքերէ եւ դժուարութիւններէ ազատուած ենք:

Շատ մը Հայրենակցական Միութեանց Կեդր. Վարչութիւններուն Նիւ Եորք գտնուելուն պատճառով եւ անոնցմէ շատերուն հետ յարաբերութեան գալով՝ հասկցած եմ թէ անոնք ի՞նչ ահապին ծախքերու ենթարկուած են եւ ամէն տարի ի՞նչ դժուարութիւններէ կ'անցնին տուններու, ջուրի ճամբաներու շինութեան, դաղթականներու փոխադրութեան համար: Բարեբախտաբար մեր Միութիւնը ազատած պիտի ըլլայ այդ բոլորէն՝ Նուպարաշէնի միանալով:

Հոս չի վերջանար սակայն մեր պարտականութիւնը. մենք ալ մեր պատասխանատուութիւնը ունինք եւ ամէն ժամ պատրաստ գտնուելու ենք ընդառաջ երթալու անոնց:

Ամերիկահայ Զնգուշցիներու ընկելու ենք մեր կարելին սկսուած գործը զուլիս հանելու եւ հինգի տեղ տասը տուն շինելու, որով քան տուն պիտի ունենանք: Իսկ արտասահմանի Զնգուշցիները պատրաստ ըլլալու են երթալու Նուպարաշէն՝ հոն հաստատուելու նպատակաւ, հոն տանելու Զնգուշցիներու յատուկ բարոյական կորովը եւ մաքուր նկարագիրը, հոն հինին տեղ Նոր Զնգուշը հաստատուելու համար:

Այս ամիսի տեղեկութիւնները թող նոր ոգի մը արթնցնեն իւրաքանչիւր Զնգուշցիի մէջ:

Ա. ՓԱՊՈՒՃԵԱՆ

Նիւ Եորք

«Ծօլառ»-ի Բացառիկին մէջ Զնգուշցի անհետացող թէ սարսափ յայտնի կուսակցական մի քանի ղեմքերու լուսանը՝ կարները հրատարակուած ըլլալուն պատճառաւ, հայրենակիցներէ ոմանք Ծօլառ կուսակցական թերթ նկատած են:

«Ծօլառ»-ի վարչութիւնը այսու կը յայտարարէ թէ նախ՝ մենք մեր թերթին որդեգրած ուղղութեան բացարձակ տէրն ենք: Երկրորդ՝ «Ծօլառ» յարգած է ու պիտի յարգէ այն բոլոր հայրենասէր հայրենակիցները, որոնք ունէ կուսակցութեան միջոցաւ իրենց ազդակիցներուն ու հայրենիքի ազատագրութեան ծառայելու քաջութիւնն ունեցած են: «Ծօլառ»-ի էջերը միշտ բաց եղած են այսպիսի արժանաւորներու համար առանց խտրութեան: Երրորդ՝ տղէտներու քմահաճոյքին ծառայած չենք ցարդ եւ ասկէ վերջ ալ ծառայելու միտք չունինք բնաւ. կարգ մը ոչնչութիւններու խաբարը խոշոր ընկելու համար պատմութիւնը մութին մէջ պահելու չենք զիջիր: Չորրորդ՝ Ծօլառ կուսակցական թերթ չէ. եթէ եղած ըլլար՝ պիտի չամշայինք այդպէս յայտարարել: Եթէ ոմանք կ'ուզեն անպատճառ կուսակցականացած տեսնել Ծօլառը եւ չեն հանդուրժեր անոր ուղղութեան, այդպիսիներ շատ աղէկ ըրած կ'ըլլան եթէ հեռու մնան Ծօլառի շրջապատէն ու Ծօլառի մթնոլորտն ալ թող չապականեն: Հինգերորդ՝ ատելութիւնն ու սխալալուծիւնը Ծօլառի սահմաններէն դուրս եղած է եւ դուրս ալ պիտի մնայ: Մենք չիտակ չամբունք մէջ ենք եւ պիտի շարունակենք այդ ուղիէն ընթանալ, առանց ալ ու ձախ հակելու:

«ԾՕՎԱՌ»-Ի ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՇԻՖԱԼՈ

ԶՈՒԹԱԿԱԼԱՐ ՕՐ. Մ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Քանի մը շաբաթ առաջ Օր. Մ. Ստեփանեան մասնայատուկ նուագահանդէսի մը մէջ ջութակի վրայ նուագեց մի քանի ղեղեցիկ եւ դժուարին կտորներ, որոնք կրկնեց անընդհատ ծափահարութեան սալիման տակ:

Այս նուագահանդէսը սարքուած էր Օր. Ստեփանեանի նոր ուսուցչին կողմէ, փոքրիկ բայց գեղեցիկ կերպով կահաւորուած սրահի մը մէջ. ներկայ էին մօտ 100 անձինք, որոնք լեցուցած էին սրահը:

Նուագահանդէսին կը մասնակցէին այս Փրօֆէսորին ամենակարող աշակերտներէն միայն երկու հոգի, ջութակահար Օր. Ստեփանեան եւ ուրիշ դաշնակահար աղջիկ մը:

Օր. Ստեփանեան այդ օր ըրաւ իր ամենակարելին հայ տաղանդը երեւան ընկելու համար: Ներկաները զմայլանքով իրարու կը հարցնէին թէ ո՞վ է այս աղջիկը, ի՞նչ ազգի կը պատկանի:

Իրապէս Օր. Ստեփանեան մեր հայրտութեան առարկան եղաւ այդ օր, իր դիւթիչ արուեստին շնորհիւ:

Գժրախոսաբար միայն քանի մը հայեր պատիւն ունեցանք լսելու եւ տեսնելու Օր. Ստեփանեանի նուագն ու յաջողութիւնը: Կը յուսանք որ քիչ ատենէն շատ շատերը զինքը լսելու պատահութիւնը պիտի ունենան:

Օր. Ստեփանեան իր յաճախած հայ սֆուլի նուագախումբին առաջնորդն է եւ այժմ կը հետեւի նաեւ դաշնակի:

Անցողակի կը լսենք որ Օր. Ստեփանեանի ծնողքը կը մտադրեն զինքը Գիւմրիի գրական դպրոց, իր ջութակի ճիւղը զար-

գացնելու եւ կատարելագործելու համար. եթէ իրական է այս լուրը, ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք շնորհալի օրիորդին:

Հոս կ'արժէ ըսել որ Օր. Ստեփանեան վեց տարեկան հասակէն սկսած է ջութակի դաս առնել եւ կրնանք երեւակայել թէ անոր ծնողքը ուրքան դժուարութիւններու տուեցած են իրենց դուստրը մինչեւ այս աստիճանին բերելու համար: Օր. Ստեփանեան այժմ 16 տարեկան է եւ յոյս ունինք որ մի քանի տարիէն պիտի հասնի ճանչցուած եւ անուանի ջութակահար մը ըլլալու իր փառաքին, ի պատիւ իրեն, ծնողաց եւ մեզ Ձեզուչիներու:

Կը սիրենք յիշել իրողութիւն մը եւս: Օր. Ստեփանեանի յաջողութեան գաղտնիքներէն ամենամեծը իր հօրեղբայրը Պրն. Պետրոս Ստեփանեանը եղած է: Ան եղած է իրական եւ մեծ ընթերցող մը. ան շատ անգամ հետեւած է Օր. Ստեփանեանի ուր որ գացած է, քաջալերած է, օգնած է ամէն կերպով որ կարելի է: Այս իրողութեան մէջ մենք կը տեսնենք Պրն. Պ. Ստեփանեանի անսպառ սէրը ոչ միայն իր սիրելիին այլ երաժշտութեան արուեստին հանդէպ:

Երանի թէ ասանկ շատ մը ընթերցող ունենան մեր պըղտիկները. այն ատեն վստահ ենք թէ անոնք մեծ կարողութիւններ ցոյց պիտի տան:

Լիակատար պսակում կը մաղթենք Օր. Ստեփանեանի ապագայ յոյսերուն եւ մեր խնդակցութիւնները կը յայտնենք իր ծնողաց եւ ընթերցողին:

ՏԻԿ. Վ. ՓԱՊՈՒՃԵԱՆ

Նիւ Եորք

ԶՆԳՈՒՇՑԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷՆ

ՖՐԵՋՆՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍԸ

Մայիս 31ին տեղի ունեցաւ Ֆրէճնոյի մասնաճիւղին դաշտահանդէսը Հէտ Կէյքի մէջ: Սան Ֆրանչիսկոյէն եւ Օքլենտէն եկած էին հայրենակիցներ Տիարք եւ Տիկնայք Ա. Փիլօսան, Կ. Տ. Ստեփանեան, Մ. Փափաճեան, Ճան Գօնոսեան, Արամ Քէօսէկան, Մ. Պոյաճեան, Մ. Երամեան եւ Պօղոս Գրիգորեան: Լոս Անճէլըսէն եկած էին Մ. Պապեան, Մ. Խ. Թէլօսեան, Սարգիս Պետրոսեան, Յ. Մաթոսեան, Գ. Յոսէփեան եւ ուրիշներ:

Հանդէսին խանդավառութիւնը շատ մեծ եղաւ. փեսայ Մատղաշեանի նուագախումբը միշտ զուարթ եղանակներ նուաղեց: Պարերէն յետոյ ժողովուրդին հրամցուեցաւ երկրի թաթար զավուրմա եւ Ձեզուչի փիլաւ:

Միութեան գործունէութեան եւ նպատակին շուրջ խօսեցաւ Պրն. Մ. Խ. Փիլօսան, որ զովեց Միութեան նպատակը եւ գրուածեց Կեզը. վարչութեան խելացի գործելակերպը. թելադրեց որ ներկաներ ուժ տան Ձեզուչի վերաշինաց Միութեան եւ յարկելով կարգապահութիւնը զօրացնեն զայն: Յետոյ հրաւիրեց Պրն. Անուշաւան Տէր Միւրիշեանը, որ իր կարգին տեղեկութիւններ տուաւ նուագախումբի շինութեան եւ Հայաստանի վերելքի մասին: Վերջին խօսողը եղաւ Պրն. Յ. Յ. Մանուկեան՝ հին եւ նոր Ձեզուչի մասին: Երկեց մեր սիրտը Ճան Գօնոսեան, եւ քաջըֆոնի վրայ նուաղեց Ճ. Քէօսէկեան:

Փոքրիկներուն համար մրցախաղ մը պատրաստած էր Տիկնի Բօզ Մ. Փիլօսան. մրցանակ շահող պատիկները եղան Ա. Ս. Գօնոսեան, Մ. Աւետիքեան, Ս. Գ. Տաղտիկեան, Ճ. Մ. Պապեան եւ Մ. Խ. Սըրբմեան:

Կ'արժէ յիշել որ շատ յաջող դաշտահանդէս մը ունեցանք թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս: Մեր այս յաջողութիւնը կը պարտինք Պրն. Յ. Պ. Սըրբմեանի: Վարչութիւնն այս դաշտահանդէսին կարգադրութիւնը յանձնած էր Պրն. Յ. Սըրբմեանի եւ ան իր կարգին իրեն օգնականներ ընտրած էր Սարգիս Ա. Սըրբմեան՝ իր թրքով միասին, Յ. Ս. Թէլօսեան եւ Յ. Սըրբմեան, իսկ Տիկնիներէն կանչած էր Տիկնի Սաւա Խ. Փիլօսան, Վարդեր Յ. Սէրեան, Համեստ Խ. Մ. Սըրբմեան, Մ.

Կ. Յակոբեան, Ա. Յ. Մատղաշեան, Ա. Կ. Սըրբմեան եւ Բօզ Մ. Փիլօսան, որոնք կերակուրներ պատրաստելու հոգը ստանձնած էին:

Վարչութիւնն իր շնորհակալութիւնը կը յայտնէ Պրն. Յ. Սըրբմեան եւ իր օգնականներուն ու բոլոր ներկաներուն, որոնց առատաձեւ եւ նախապէս զոյգացաւ 155 տուարի կոկիկ դուսմար մը: Շնորհակալութիւն նաեւ Պրն. Մ. Պապեանի, որուն նուիրած տուի մը սիկարէն յայտնաւ 7 տուար:

ԶՆԳՈՒՇԻ ՎԵՐՇ. ՄԻՈՒԹԵԱՆ ՖՐԵՋՆՈՅԻ Մ. ՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՖՐԵՋՆՈ.— Տէր եւ Տիկնի Մարթին Ա. Սըրբմեանի բնակարանը եւ Լաբուած հայրենակիցներու եւ բարեկամներու ներկայութեան տունը: Երեւոյ փոքրիկին Տանրի մէկ տարուան տունը: Բարեկամներ հայրենակիցներ եկած էին նուէրներով: Ներկաներ լաւ կերպով բարասրուեցան:

*** Այլի Տիկնի Ազաւի Տաղտիկեան իր մէկ հատիկ տղուն Վ. Ղէնի Խայ սփռլէն շրջանաւարտութեան տոթի պատրաստած էր թէյստեղան մը, որուն շուրջ բոլորուած էին բաւական թիւով հայրենակիցներ: Ֆատուրի հովիւ Տիարք Վարդապետ օրհնեց սեղանը, որ վերջ խօսեցան ու մաղթանքներ րրին Ա. Տաղտիկեան, Գ. Տաղտիկեան Ասլան Սըրբմեան, Ճէք Քէօսէկան, Յ. Սառոյեան, Մ. Սառոյեան Վարդապետը, բոլորն ալ զովեցին Վաղէնը եւ տուն օղտակար իր տականներ: Կ'արժէ յիշել Մատղաշեանի եւ Սառոյեանի նուագը եւ իր Վ. Կ. Յակոբեանի պատրաստած քէյքերը: Սեղանին վրայ Այլի Վ. Վ. Վ. Ազաւի 5 տուար նուիրեց «Մօլաու»ի, ներկաներ եւս մասնակցեցին 1 տուարով եւ 50 սէնթով. զոյգացաւ 14 տուար:

Կը մաղթենք որ Վաղէն ըլլայ իր արժանաւոր հօրը արժանի գաւազանը: Այս թէյստեղանին օրը հիւանդանոցէն տուն վերադարձը էր միւլ Ազաւի զուստրը Տիկ. Թաղուհի, որ կուրպիի հիւանդութեան համար գործնական կենթարկուած էր: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք անոր ապագինման տոթի:

Կ. ՍԵՐԲՄԵԱՆ

ՍԷԼՄԱ.— Մայիս 29ի երեկոյին հայրենակիցներու կոկիկ բարձրութիւն մը իր ուրախութիւնը յայտնելու համար հաւաքուած էր Պրն. Վ. Սըրբմեանի բնակարանը: Այլ օր նախադրեց լրացուցած էր իր մեծ որդին Արտաշէսը: Պրն. Սըրբմեան պատանի բարասրութեամբ պատուեց ներկաները:

ՇԻՔԱԿՈ.— Յունիս 7, Կիրակի օր տեղի ունեցաւ Նշանախօսութիւն Պրն. Խաչատուր Պապեանի (Ձեզուչի) ընդ Օր. Մարիամ Պարոնի (Խաչատուրի), մայր եւ որդի Պարոնեանի տան մէջ:

Տեղույս հովիւը կատարեց նշանօրհնէքի արարողութիւնը եւ խօսեցաւ օրուան յատուկ խրատական մը: Կիբոսայրը եւ կիբոսայրը կը Տէր եւ Տիկ. Յ. Յակոբեան: Արարողութենէն վերջ ներկաներ բոլոր ունեցան պատրաստուած ճօր սեղանին շուրջ ուրախանալու համար:

Նուագախումբ մը նուագեց արեւելեան եւ տեղական եղանակներ, ատեն երկու երիտասարդներ պարեցին: Կարգադրեցան շնորհաւոր կան հեռադիւրներ, զանազան քաղաքներէ եկած: Ուրախութիւն տեսնեցին իրենց հիւսիսէն: Ներկաներ ուժ տուին իրենց բարեմաղթութիւնները ընկելով խօսեցեալ զոյգին մէկնեցան:

Այս տոթի «Մօլաու»ի վարչութիւնը իր մասնաւոր խնդակցութիւնը կը յայտնէ:

*** Տէր եւ Տիկնի Մ. Տաղտիկեան աղջիկ դաւախով մը բարձրաւորուեցան: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

*** Սեւերակցի մեր հայրենակից Խ. Գաղարին ընտանիքը Մարտի 15ին քաղաքս ժամանեց: Մեր խնդակցութիւնը կը յայտնենք:

ԼՐԱՅ

ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍ.— Ձեզուչի վերջ. Միութեան Շիքաւոյի Մատղաշեանի դաշտահանդէսը տեղի պիտի ունենայ Օգոստոսի 14ին: Մանրամասնութիւնը տեղւոյն վրայ յայտարարով:

ՇԻՔԱԿՈՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԴԱՇՏԱՀԱՆԴԻՍ.— Ձեզուչի վերջ. Միութեան Սան Ֆրանչիսկոյէն Օքլենտի Մասնաճիւղը եւս կը պատրաստուի դաշտահանդէս մը արդէ վստահ ենք թէ Ֆրէճնոյի եւ շրջակայքի մեր հայրենակիցները պիտի մասնակցեն մասնաճիւղս:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ